ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԹԻՎ 3

10.03.2021թ.

ք. Երևան

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Կատարող) (գրանցման համար՝ 222.160.928292, հասցե՝ Ալեք Մանուկյան 11), ի դեմս ռեկտոր՝ Դավիթ Խիթարյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի հենդբոլի ֆեդերացիա» ՀԿ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) մյուս կողմից, ի դեմս նախագահ Հարություն Մելքոնյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն օգտվում է Կատարողի մարզադահլիճային ծառայություններից (այսուհետ՝ Ծառայություն)՝ մարզական գույք, սանհանգույց, հանդերձարան, տարածքի մաքրում, ջեռուցում և լուսավորություն, 15 տարեկան պատանիների և աղջիկների 1-ին շրջանի հանդբոլի ՀՀ առաջնության մրցումների կազմակերպման և անցկացման համար սույն թվականի մարտի 10-14 և 17-21 ընկած ժամանակահատվածում, օրական 4 ժամ տևողությամբ իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար համաձայն Պայմանագրի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավորվում է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով պայմանագրի 4.1 կետում նշված ժամկետում:

2.1.2. Ծառայության մատուցման անհնարինության դեպքում նախապես՝ առնվազն 3 օր առաջ տեղեկացնել Պատվիրատուին Ծառայության մատուցման անհնարինության մասին և Ծառայությունը մատուցել Պատվիրատուի հետ համաձայնեցված այլ ժամկետում:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Դադարեցնել Ծառայության մատուցումը եթե՝

- Պատվիրատուն վնաս է պատճառում Կատարողի գույքին.
- Գույքն օգտագործում է նպատակային նշանակությանը անհամապատասխան.

2.3 Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1 Վճարել Ծառայությունների դիմաց՝ համաձայն Պայմանագրի 3-րդ կետի.

2.3.2 Խնամքով վերաբերվել Կատարողի գույքին և օրենքով սահմանված կարգով հատուցել իր մեղքով պատճառված վնասը.

2.3.3 Անհապաղ տեղեկացնել Կատարողին նրան հասցվող գույքային և նյութական վնասի մասին.

2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1 Կատարողից պահանջել Պայմանագրով սահմանված իր պարտականությունների կատարումը ամբողջ ծավալով Կողմերի պայմանավորվածությանն ու նպատակներին համապատասխան:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 200 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

3.2 Պատվիրատուն 3.1 կետում սահմանված գումարը վճարում է երկու փուլով՝

1. 1–ին փուլում 100 000 ՀՀ դրամ, Կատարողի կողմից հանձման–ընդունման ակտը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև մարտի 16–ը ներառյալ:
2. 2–րդ փուլում 100 000 ՀՀ դրամ, Կատարողի կողմից հանձման–ընդունման ակտը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև մարտի 23–ը ներառյալ:

3.3 Պատվիրատուն Կատարողին վճարում է մատուցված ծառայությունների համար համաձայն դուրս գրված հարկային հաշվի:

3.4 Պատվիրատուն մատուցված ծառայության համար վճարումը կատարում է կողմերի կողմից հանձման ընդունման ակտը ստորագրելուց և հաշվարկային փաստաթուղթը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում անկախիկ եղանակով՝ հաշիվ ապրանքագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին գումարը փոխանցելու միջոցով:

3.5 Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նախատեսված վճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Կատարողին վճարում է տույժ պայմանագրի գնի 0.15 զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական տոկոսի չափով:

3.6 Տույժի մուծումը Կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը կնքվում է 2021թ. մարտի 10–ին և ավարտվում կողմերի կողմից 2–րդ փուլի հանձման ընդունման ակտի ստորագրումը:

4.2 Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցումը իրականացվում է ա.թ. մարտի 10-14–ը և 17-21, յուրաքանչյուր օր ժամը 15:00-19:00՝ 4 ժամ տևողությամբ:

5 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը կրում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

6 ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

6.2 Մինչև պայմանագրի ժամկետի ավարտը կողմերի միջև ծագած պարտավորությունները ենթակա են կատարման:

7. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

7.1 Պայմանագրով սահմանված և դրան վերաբերվող ծանուցումները ներկայացվում են գրավոր: Ծանուցումը համարվում է պատշաճ կերպով տրված, եթե այն առձեռն հանձնված է ստացողին՝ ստացման փաստի հավաստմամբ կամ ուղարկված է հետադարձ ծանուցմամբ Պայմանագրով նշված հասցեով կամ ուղարկված է պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեով:

7.2 Պայմանագրում նշված հասցեների փոփոխության դեպքում Կողմը պարտավոր է այդ մասին տեղեկացնել մյուս Կողմին:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում Կողմերի միջև համաձայնության չհասնելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

8.2 Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են համաձայն ՀՀ օրենսդրության:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում 10.03.2021թ-ից գործում է 2-րդ փուլի հանձման-ընդունման ակտի ստորագրման օրը:
9.2 Պայմանագրի գործողության ժամկետը կարող է դադարեցվել Կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ:
9.3 Պայմանագրի վաղաժամկետ լուծումը չի ազատում Կողմերին միմյանց հանդեպ մինչև լուծման օրը ծագած պարտավորությունների կատարումից:
9.4 Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Պայմանագրի հավելվածները պայմանագրի անբաժանելի մասն են:
9.5 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարող
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
«ԱյԴիԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065324000
ՀՎՀՀ 01505821
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան

Պատվիրատու
«Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» ՀԿ

ք. Երևան, Ագաթանգեղոսի 6

ՀՎՀՀ՝ 02508717
Նախագահ՝ Հասմիկ Մելքումյան

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹԻՎ 3 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՆՁՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ
ԹԻՎ 3.1

ք. Երևան **15 մարտ 2021թ.**

Հիմք ընդունելով 2021 թվականի մարտի 10-ին կնքված ծառայությունների մատուցման թիվ 3 պայմանագրի 3.2-րդ կետը.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը, (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ռեկտոր Դավիթ Խիթարյանի, ով գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» ՀԿ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախագահ Հարություն Մելքոնյանի, ով գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կազմեցին սույն հանձման-ընդունման ակտը հետևյալի մասին.

1. Սույն ակտին համապատասխան, Պատվիրատուն ծառայությունների մատուցման թիվ 3 պայմանագրի 3.2 կետին համաձայն, Կատարողին վճարում է **100 000** (հարյուր հազար) ՀՀ դրամ մատուցված մարզադահլիճային ծառայությունների համար:
2. Կողմերը հավաստում են, որ թիվ 3 պայմանագրի առարկայով սահմանված պարտականությունները Կողմերը կատարել են պատշաճ որակով, ամբողջ ծավալով, պայմանագրով սահմանված ժամկետում և թերություններ չկան:
3. Սույն հանձնման-ընդունման ակտը հիմք է պայմանագրի գործողության ժամկետն ավարտելու համար:
4. Սույն հանձնման-ընդունման ակտը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մաս: Կազմված է երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	**Պատվիրատու**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» ՀԿ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Ագաթանգեղոսի 6
«ԱյԴիԲանկ» ՓԲԸ	
Հ/Հ 11817065324000	
ՀՎՀՀ 01505821	ՀՎՀՀ՝ 02508717
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Նախագահ՝ Հարություն Մելքոնյան